ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

---

# ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄՈՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Երեւան 29 մարտի 2010թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Մ. Թոփուզյանի
Անդամակցությամբ՝ Հ. Դանիելյանի
Ֆ. Թոխյանի

Ուսումնասիրելով քաղ. Ռաֆիկ Մխիթարյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

**ՊԱՐԶԵՑ.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղ. Ռաֆիկ Մխիթարյանը 18.03.2010թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 231-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, 2-րդ կետի, 233-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, 6-րդ ենթակետի, 2-րդ եւ 4-րդ կետերի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը:

Տվյալ անհատական դիմումի նախնական ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված է, որ ՀՀ քաղ. դատ. օր.-ի վիճարկվող դրույթների սահմանադրականության հանգամանքը մինչ այդ քննության առարկա է դարձել ՀՀ սահմանադրական դատարանի 2007թ. ապրիլի 9-ի թիվ ՍԴՈ-690, 2008թ. մայիսի 27-ի թիվ ՍԴՈ-754 եւ 2008թ. հոկտեմբերի 8-ի թիվ ՍԴՈ-765 որոշումներով:

Այսպիսով, դիմումում առաջադրված հարցերի վերաբերյալ առկա են ՀՀ սահմանադրական դատարանի հիշատակված որոշումները, իսկ նմանօրինակ պայմաններում բացակայում են գործը քննության ընդունելու օրենքով սահմանված հիմքերը:

Բացի դրանից, սույն անհատական դիմումի ուսումնասիրությունը վկայում է նաեւ, որ այն ակնհայտ անհիմն է, քանի որ դիմողը չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթների միջեւ պատճառահետեւանքային կապի առկայությունը /ՀՀ սահմանադրական դատարանի 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշման 8-րդ կետ/:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

**Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացի Ռաֆիկ Մխիթարյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

29 մարտի 2010 թվականի
ՍԴԴԿՈ/2-11